



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ՀՈՒՐԵՐ

**Մայիսի 10-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ Ս. Եջմիածին են ժամանում ֆրանսիական «Կլեո» էկումենիկ խմբի շորք 20 անդամներ՝ հայր Էմմանուել Պայենի և վերապատվելի Ռընե Լալիկանի գլխավորությամբ:**

Կաթոլիկ և բողոքական հավատացյալներից կազմված այս խմբի նպատակն է՝ ուստագնացությունների միջոցով ավելի մոտիկից ծանոթանալ Արևելյան Եկեղեցիներին:

Հյուրերը Վեհարանում հանդիպում են ունենում Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Հանդիպմանը ներկա էին Գերագույն Հոգեվոր Խորհրդի ատենապետ Տ. Միռն արքեպո. Մանուկյանը և Մայր Աթոռ Ս. Եջմիածին Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահրապյանը:

Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունում է հյուրերին և համառուտ տեղեկություններ տալիս Հայ Եկեղեցու պատմության վերաբերյալ:

Հյուրերից ողջունի Փոխադարձ խոսքով հանդես են գալիս վերապատվելի Ռընե Լելլիսանը և հայր Էմմանուել Պայենը, որոնք իրենց երախտագիտությունն են հայտնում Վեհափառ Հայրապետին՝ ցույց տրված ջերմ

ընտրունելության համար, և հոգանվերներ հանձնում նրան:

Ս. Եջմիածնում գտնվելու ժամանակ հյուրերը այցելում են Մայր տաճար, Վեհարանի թանգարան, ապա «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատուն, որ մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են հայ հոգևոր մշակույթի մեծարժեք գանձերին:

«Ետմիջօրեկին ֆրանսիացի ուստավորները մեկնում են Ս. Եջմիածնից՝ ուղևորվելով դեպի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցի: \*

**Մայիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա և պատարագ է մատուցում Տ. Եղիշե քին. Բաղրամյանը:**

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում «Զամենեսեան կոր միանգամ կամիշիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա» (Մատթ. Ե 12) բնաբանով:

Իր քարոզի մեջ պատարագիչ տեր հայրը նշում է, որ Ավետարանը Քրիստոսի կողմից հաստափած օրենքների մի ամբողջություն է, որոնց նախառակն է մարդկանց համար ստեղծել խաղաղ և անդորր կյանք: Ապա

անդրադառնալով իր քարովի բնաբանին՝ տեր Եղիշե քահանան ասում է, որ եթե Քրիստոսի այդ պատվիրանը հասկացվեր մարդկանց կողմից և գործադրվեր այնպես, ինչպես Քրիստոս է պատվիրում, ապա չարագործությունները խապահ կվերանային աշխարհի և մարդկանց միջից:

Իր քարովի վերջում, դիմելով բարեպաշտ ժողովորդին, տեր հայրը հորդորում է նրանց միջու ի մտի ունենալ այն, որ ինչ իրենք են պահանջում մարդկանցից, որ կատարեն իրենց համար, նոյնը իրենք պարտավոր են անելու նրանց նկատմամբ, որպեսի աշխարհում միջու խաղաղություն և արդարություն լինի: Քրիստոսի առջև ամեն ոք իր կատարած գործերի համաձայն պիտի արդարանա կամ դատապարտվի:

\* \* \*

**Մայիսի 14-ին, երեքշաբթի.**—Այսօր, իր տիկնոց ընկերակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում «Լու Անջելես Թայմկ» օրաթերթի Մոսկվայի գրասենյակի թղթակից պրո. Վիլյամ Խթընը և հարցապրույց ունենում Մայր Աթոռի դիմանապետ Տ. Ներսես Եպո. Պողասաւյանի հետ:

\* \* \*

**Մայիսի 15-ին, չորեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Նկրոլիբարուժական միջազգային ընկերակցության մի խումբ մասնագետներ՝ նոյն ընկերակցության նախագահ Արեն Հյուտսոնի գլխավորույթամբ:

Հյուրերը Վեհարանում Հայոց Հայրապետի հետ ունենում են հանդիպում և զրոյց, որն անցնում է ջերմ, բարեկամական մթնոլորտում:

\* \* \*

**Նոյն օրը** Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում հոգևոր ճեմարանի տեսուց Տ. Եպիփիկ քին. Պետրոսյանը ներկաներին ծանոթացնում է սույն թվականի ապրիլի 18—21-ը Մեքսիկայում տեղի ունեցած «Աստվածաբանական կրթության ծրագիր» ժողովում քննարկված հարցերին: Այդ ժողովին, որպես Հայ Եկեղեցու ներկայացուցիչ, մասնակցել էր նաև տեր հայրը:

Հավաքույթի վերջում Տ. Եպիփիկ քահանան պատասխանում է հիշյալ ժողովի վերաբերյալ իրեն ուղղված մի շարք հարցերի:

\* \* \*

**Մայիսի 16-ին, հինգշաբթի.**—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկապոն վրդ. Նաշարյանը:

«Գոհաբանական մաղթանք»-ից առաջ պատարագի հայր սուրբ քարու է խոսում «Երանի որոց որ ոչ իցէ տեսեալ եւ հաւատացեն» (Հովհաննես 1 29) բնաբանով:

Իր քարովի մեջ հայր սուրբն ասում է, որ Քրիստոսի Հարության դեպքը միանգամից չընդունվեց առաջին հավատացյալների կողմից, միանգամից չհասկացվեց իր խորոշականության մեջ, նոյնիսկ առաջլամբերի կողմից: Շատերը թերահավատորեն էին վերաբերվում Հիսուսի Հարությանը: Անգամ Թովման Առաքյալը մինչև չշոշափեց Հիսուսի վերքերը, ամբողջութամբ չհավատաց նրան: Հավաքը նրա մեջ հաստատվեց տեսնելու փաստով միայն:

Այսուհետև, շարունակելով իր քարովը, հայր սուրբը նշեց, որ հավատալու համար անպայմանորեն աչքով տեսնելը, ականչող լսելը պարտադիր չէ, որովհետև հավատքը չի ներփակվում միայն աչքով տեսածի, ականչող լսածի և ձեռքով շղշափածի մեջ:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մաղթանք՝ նախազահորյամբ Գերազոյն Հոգևոր Խորիրդի առենապետ Տ. Սիոն արքեպո. Մանուկյանի՝ «Ի լիշտակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սոտ ի Ս. Էջմիածին յամի Տեառն 1441 թ.»:

\* \* \*

**Մայիսի 17-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախազահորյամբ, տեղի է ունենում Գերազոյն Հոգևոր Խորիրդի հերթական նիստը:

\* \* \*

**Մայիսի 19-ին, կիրակի.**—Երկրորդ Ծաղկապարդ:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հովհաննիկ արքեպո. Սանթորյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագի սրբականը քարու է խոսում «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշե) բնաբանով, որի ընթացքում նա պատմական անցյալի դեպքերի լոյսի տակ վեր

է հանում հայ ժողովրդի հերոսական մաքառումները Ազգայիշից մինչև Սարդարապատ: Կանգ առնելով մասնավորապես Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի պատմական նշանակության վրա՝ քարոզիչ սրբազնը նշում է, որ Սարդարապատի ճակատամարտի մաղթական ավարտը առաջնորդ ուժ դարձավ՝ հայ ժողովրդի համար, և առանց այդ հաղթանակի գոյություն չէր ունենա այսօրվա լուսավոր ու ծաղկուն Սովետական Հայաստանը:

Հավարտ և պատարագի «Եկեղեցիս Հայատանեաց կատարի հոգեհանգիստ վասն աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգինոր Խորհրդի անդամները և սիյուռքահայ ոխտավորմեր:

\* \* \*

**Մայսի 21-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Տ. Տիրան արքեպիս. Ներսոյանն ու Տ. Մեսրոպ ծ. Վոլոգդի գործարանը՝ շարունակելու համար Հայ Առաքելական Եկեղեցու նոր Կանոնադրության նախագծի կազմման աշխատանքները:

Տ. Տիրան արքեպիսկոպոսին ուղեկցում էր Հրաչ սրբ. Չիլինգարյանը (Նյու Յորք):

\* \* \*

**Մայսի 22-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակոն Վոլոգդարյանը ներկաներին ծանոթացնում է Ազգայի Նասիբյանի 1984 թ. Լոնդոնում անգերեն լեզվով հրատարակված «Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ.» գրքի երկրորդ մասի բովանդակությանը:

\* \* \*

**Մայսի 26-ին, կիրակի.**—Հոգեգալուստ (Պետակուսէ, յիններորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի փրա և պատարագ է մատուցում Կենտրոնական Եկեղեցի (Ավատրիա, Արևմտյան Գերմանիա և Շվեյցարիա) Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. Վոլոգդի գործարանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազնը քարոզ է խոսում «Օրինութիւն ի բարձունք ելողին ի Հօրէ Հոգին Սրբոյ, որով Առաքեալըն արքեցան անմահական բաժական եւ հրաիրեցին զերկիրս ի յերկինս» (Շարական) բնաբանով, որի ընթացքում

նշում է, որ «Սուրբ Հոգին Աստուծոն ջնորիքն է՝ տրված մարդկությանը: Սուրբ Հոգին այն ուժն է, որը մարդիկ փոխանցում են միմյանց, որպեսի լցվեն, զորանան նորանոր շնորհներով»:

Անոնիեսն սրբազնը դիմելով հավատացյաներին՝ մաղթում է, որ «մարդիկ լինեն ավելի երջանիկ, եղայրասեր, մարդասեր և ծառայասեր, իսկ աշխարհը լինի ավելի խաղաղ ու ապահով»:

Վերջում աղոթելով Սուրբ Հոգուն՝ սրբազնը հայցում է, որ «Սուրբ Հոգին այսօր ևս իշխի իր փոքրիկ հոտի վրա՝ ի Հայատան և ամբողջ աշխարհի»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Մայսի 29-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակոն Վոլոգդարյանը ներկաներին ծանոթացնում է Ազգայի Նասիբյանի 1984 թ. Լոնդոնում անգերեն լեզվով հրատարակված «Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ.» գրքի երկրորդ մասի բովանդակությանը:

Հավաքույթի վերջում հայր սուրբը պատասխանում է իրեն տրված հարցերին:

\* \* \*

**Հունիսի 2-ին, կիրակի.**—Յիշատակ Եղիայի մարգարեին:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա և պատարագ է մատուցում Կենտրոնական Եկեղեցի (Ավատրիա, Արևմտյան Գերմանիա և Շվեյցարիա) Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. Վոլոգդի գործարանը:

«Հայր մեր»-ից առաջ ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվում Տ. Տիրան արքեպիս. Ներսոյանը քարոզ է խոսում, որի ընթացքում, անդամառնալով Քրիստոսի Հարության խորհրդին, նշում է, որ այն «մեր կրոնի և հավատքի ամենամեծ ու կարևոր տոնն է, կենտրոնը ամբողջ քրիստոնեական վարդապետության և քրիստոնեական կյանքի: Քրիստոսի Հայությունը քրիստոնեական փրկագործության մեջ ամենակարևորն ու ամենաեականն է»:

Վերջում սրբազն հայրը իր մաղթանքներն է ուղարկում հավատացյաներին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հոնիսի 3-ին, երկոշաբթի.—Տօն Սրբոց կոսանացն Հօփիսիմեանց:**

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական համդես ի վանս Սրբություն կոսին Հօփիսիմեա»: Օրվա պատարագին է Տ. Շնորհք արեղա Բաղդասարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում «Հօփիսիմէ մեծ խորհուրդ և անոն ցանկալի, ընտրեալ ի յերկի և դասեալ ընդ հրեշտակս» (Ծարական) բնաբանով:

Իր խոսքի մեջ հայր սուրբը վեր է հանում նահատակ Կուսերի մարտիցոսացման նշանակությունը՝ «այսատանում քրիստոնեության տարածման գործում»:

\* \* \*

**Հոնիսի 4-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց կոսանացն Գայիանեանց:**

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական հանդես ի վանս Սրբություն կոսին Գայիանեա»: Պրտեղ պատարագ է մատուցում Տ. Գորգեն քին. Աշուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում «Դարձեալ վերըստին արարչագործ զօրութիւն, և դարձեալ եղեմ աստուածատունկ զարդարի, քանզի ծառն կենաց տնկեցաւ ի դրաստին, բերելով մեզ պտուղ երանելին Գայիանէ» (Ծարական) բնաբանով:

\* \* \*

**Հոնիսի 6-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ Եպիփառպոսին:**

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական հանդես ի վանս Ա. Շողակաթի»: Օրվա պատարագին է Ա. Շողակաթ վանքի վանահայր Տ. Ղևոնդ քին. Հարությունյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում «Շնորհեցաւ մեզ դեղ կենաց՝ նշխար սորին ոսկերաց ի ձեռն Լուսաւորչին՝ «այսատանեայց աշխարհի» (Ծարական) բնաբանով:

\* \* \*

**Հոնիսի 7-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Առող Ս. Էջմիածին են ժամանում Զագորսկի հոգևոր Ճեմարանի ասպիրանտ Գավրիլ Վարդապետ Գավազ (Բուղարիա) և Յարովակ Շինչարը (Չեխովակակիա), մոտիկից ծանոթանալու Հայ Առաքելական Եկեղեցուն:**

\* \* \*

**Հոնիսի 8-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելու ի վիրապէն:**

Այսօր Մայր տաճարի Խջման սեղանի վրա և պատարագ է մատուցում Տ. Գրիգոր ավագ քին. Տերտերյանը:

\* \* \*

**Հոնիսի 9-ին, կիրակի.—Տօն կաթողիկէ Ս. Էջմիածնի:**

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա և պատարագ է մատուցում Տ. Արսեն եպս. Բերեբյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սըրբապանը քարոզ է խոսում «Եկայք շինեցուք սուրբ պիտորանն լուսոյ, քանզի ի ամածագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Ծարական) բնաբանով:

Իր խոսքի մեջ սըրբապանը ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության տարածման ու Տ. Էջմիածնի հաստատման պատմությունը նշում է նաև, որ «այսօր տոնելով Տ. Էջմիածնի տոնը՝ մեծարում ենք նաև այս քրիստոնահաստատ Աթոռի գահականերին: Հայ ժողովուրդը, Վեհափառ Հայրապետի խոսքերով ասած՝ «ԿԱՍՏՎԱԾ փնտրելու ճանապարհին գտել է Տ. Էջմիածնին»: Այս Եկեղեցին, կանգնած իր քրիստոնեական առաքելության բարձր մակարդակի վրա, դարձել է ողջ հայության հոգմուր մայրո»:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է «Մաղթանք Տ. Էջմիածնի»:

\* \* \*

**Հոնիսի 10-ին, երկոշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 9.00-ին, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից Մոսկվա, այստեղից ել՝ նյու Ֆորք, մեկնեց Տ. Տիրան արքաւ. Ներսոյանը՝ ուղեկցությամբ Հրազ սրկ. Զիլինգարյանի:**